

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի  
2015թ. նիստերի արձանագրություններ

Արձանագրություն 2

2015թ. մարտի 27-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ՝ նախագահությամբ Ռ.Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ.Ասոյանի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 25-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուսումնական տարվա 1-ի կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկուցող՝ դեկան Թ. Ասոյան/

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի ինքնավերլուծության և ինքնագնահատման ընթացքի ներկայացում:

/զեկուցող՝ դեկան Թ. Ասոյան/

3.ԳՊՀ-ում մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքների ընդունում:

/ զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4.ԳՊՀ-ում ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքների ընդունում:

/ զեկուցող՝ ԳՊՀ գլխ. հաշվապահ Գ.Մուրադյան/

5.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվությունը և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանը: Խոսելով բուհերի վարկանիշավորման մասին՝ նա ասաց, որ ԳՊՀ-ում աշխատանքներն ընթանում են ճիշտ ուղիով, քանի որ այդ սանդղակում մեր համալսարանը բարձր տեղ է գրավել, սակայն նկատի ունենալով կենսական բոլոր ոլորտներում արագ զարգացումները՝ պետք է նույնքան արագ արձագանքել դրանց՝ ուսուցման ոլորտ ներառելով նոր

կրթական ծրագրեր, կիրառելով նոր կազմակերպչական և մանկավարժական տեխնոլոգիաներ:

Զեկուցողը նախ անդրադարձավ ընդունելությանը՝ նշելով, որ այստեղ միտումները բացասական են, ապա ներկայացրեց ուսանողների շարժը ֆակուլտետում:

Ֆակուլտետի առաձառնիմության հետ կապված վիճակագրությունն ու վերլուծությունները Թ.Ասոյանը ներկայացրեց նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատությամբ: Արդյունքների ամփոփումից պարզվում է, որ ն' բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում առաջադիմությունը բարձրացել է համապատասխանաբար 6%-ով և 14%-ով, իսկ ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 80,54%՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 9%-ով:

Ժամանակի պահանջներն արտացոլելու համար պետք է ուշադրության կենտրոնում պահել ուսալաններն ու առարկայական ծրագրերը: Ֆակուլտետի ամբիոններում, խորհրդում պարբերաբար քննարկվում են դրանց հետ կապված փոփոխությունները, արդյունքում մի շարք նոր դասընթացներ են մտել ուսալան: Կրթական ծրագրերի իրականացումը ապահովում է ֆակուլտետի որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, գիտական սեմինարներ:

Թ.Ասոյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում աշխատանքներն ավելի շատ են լինում՝ կապված դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանության, ամփոփիչ աստեստավորման, խորհրդատվությունների կազմակերպման և այլ միջոցառումների հետ, ուստի ներկայացված գործողությունների ծրագիրն ավելի հազեցած ու բազմազան է:

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ զեկուցողն ասաց, որ ինքնավերլուծությունը միշտ գտնվում է ուշադրության կենտրոնում: Չափորոշիչներով պահանջվող տվյալները հավաքվում, համակարգվում և վերլուծվում են: Աշխատանքները կավարտվեն ընդունված ժամկետներում:

ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը զեկուցեց ԳՊՀ-ում մարդկային ռեսուրսների, իսկ գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանը ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքների ընդունման անհրաժեշտության մասին: Նրանք անդրադարձան այդ փաստթղթերի հիմնական դրույթներին:

Զեկուցումների շուրջ ծավալվեց քննարկում:

Հիմք ընդունելով զեկուցումները և ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ԲՑ դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ԲՖ դեկան Թ.Ասոյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

3. ԲՖ դեկան Թ.Ասոյայանի զեկուցումը ֆակուլտետում ներքին գնահատման և ինքնավերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

4. Ընդունել ԳՊՀ-ում մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքները:

5. Ընդունել ԳՊՀ-ում ֆինանսական ռեսուրսների կառավարման քաղաքականության հիմունքները:

Գիտխորհրդի նախագահ՝	Ռ.Հակոբյան
Գիտքարտուղար՝	Թ.Ասոյան

